ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-104

ք. Երևան «16» 09 2025թ.

ՀՀ Ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր բարտուղար Ա. Ֆիլդանանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա, այսուհետև «Գնորդ», մի կողմից, և «[illegible]», ի դեմս տնօրեն [illegible], որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև «Վաճառող» սրուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հաստիքով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժառանգակարգերով նախատեսված ապրանքը (այսուհետև՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող պակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտումով ապրանք, իր բնույթությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էական խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.8 Ծանել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն հրաժարվելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Սնանկության և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14 490 000 (տասնչորս միլիոն չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը՝ նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով՝ անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով հավելված N 2-ում նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Մեկ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, ինչ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Շինարարն միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օրը**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացառական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև, ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է, ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի գիջում՝ պահանջի գիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը գիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի գիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 3) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է, ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 2.1 և N 3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր

կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ,
ՀՀ Ֆինանսների նախարարության	Տերյան փ. 4
գործառնական վարչություն	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011042471	Հ/Հ 1570099448180100
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 08626999
Հեռ. (010) 59 61 52	Հեռ: 044 54 04 55
Էլ. հասցե՝ [illegible]@mta.gov.am	Էլ. Փոստ: sev-art@inbox.ru
[illegible] Ֆիրսակյան	---------- Ա. Սևանյան
/Գլխավոր քարտուղար/	/Տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«16» 09 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-104 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանում նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄԴ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	42418410/501	Շարժական ջրային տախտակամած	Ningbo Uknow commodity co., Ltd Shantou Jinyafa Electronics Co., Ltd. Floating dock , Plastic cleat , Handrail , Solar Warning Lights , Solar powered marine navigation lighthouse Model: TB-1X 2 Floating dock JY-2020 Plastic cleat Handrail V Cube SGM7808B	Ըստ հավելված 1.1-ի	քմ	14 490 000	105	Ք. Սևան Հանգստի գոտու 4-րդ փողոց 54/1	105	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո 40 օրվա ընթացքում

			M6 Zinck chain Pin							

Հավելված 1.1

Անվանում՝ տախտակամած

- Նյութ HDPE (High-Density Polyethylene) – Բարձր խտության պոլիէթիլեն
- Չափեր 500 × 500 × 400 մմ
- Քաշ (մեկ կտոր) ՝ 6.5–7.5 կգ
- Բեռնատարողություն ՝ 320–360 կգ/մ²
- Օգտագործման ժամկետ 10–15 տարի
- Ջրակայունություն 100% (չկլանի ջուր)
- Ջերմաստիճանային դիմադրություն -60°C-ից մինչև +80°C
- Ունենա UV պաշտպանություն (հակաօքսիդացուցիչներով), հրդեհային դիմադրություն, հարվածադիմացկուն, չժանգոտվող, չքայքայվող, չսահող
- Գույներ կապույտ-130հատ, նարնջագույն-290հատ
- ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը, իսկ մոնտաժումը իրականացվելու է նկար N1 դասավորվածության համաձայն
- իրականացնել առնվազն չորս անձի վերապատրաստում՝ մոնտաժման և պահպանման աշխատանքների մասով.
- մոնտաժումը իրականացվելու է ափամերձ հատվածից սկսած դեպի լիճ, որոնք գտնվում են նույն ռելիեֆային մակարդակում:
- Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից: 420 հատ





Մոսխարիկաձև գլխիկով ամրակներ (Mushroom Head Fittings), որոնք կիրառվում են լողացող պոնտոնների և ջրային պլատֆորմների ամրացման համար՝ հատկապես մոդուլային HDPE պոնտոնների դեպքում:

- Անվանում՝ Mushroom Head Bolt / Mushroom Head Connector
- Նյութ՝ HDPE (High Density Polyethylene) կամ նավային որակի Nylon/PA66 պլաստիկ
- Մետաղական տարրերակներ՝ Ծովային ալյումին (Marine Grade Aluminum), Stainless Steel 316
- Գլխի ձև՝ Շրջանաձև, մոսխարիկաձև (կլորացված բարձրացում)
- Չափսեր՝ Ø25–50 մմ գլխիկ, պտուտակի երկարություն՝ 100–200 մմ (կախված մոդելից)
- Քաշը (մեկ կտոր)՝ 0.2 – 0.5 կգ
- Բեռնատարություն 350 կգ/մ² (տիպիկ լողացող պոնտոնի տարողությանը համարժեք)
- Օգտագործման միջավայր ծովային, գետային, լճային ջրեր
- Դիմադրություն Բորիդների, աղաջրի, ուլտրամանուշակագույն ճառագայթների (UV), բայքայման
- Համատեղելիություն HDPE Floating Pontoon Cubes (Modular Docks)
- Գույն կապույտ
- Օգտագործման ժամկետ 10–20 տարի՝ ըստ նյութի (HDPE կամ Stainless Steel)
- Տեղադրման մեթոդ ներքին պտուտակային կապ կամ հենարանով ամրացում լողացող մոդուլների մեջ, ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

300 հատ



Պլաստիկ մոդուլային լողացող պոնտոններ՝ ջետ սքիի համար նախատեսված գնդիկներով (roller cubes)

- Չափսեր (մեկ մոդուլ) 500 × 500 × 300 մմ
- Քաշ (մեկ կտոր) 11–12.5 կգ
- Ռոլիկի նյութ Պոլիուրեթան / Նեյլոն / PVC
- Ռոլիկի տրամագիծ 80 – 120 մմ (կախված մոդելից)
- Ռոլիկի քանակ (մեկ ջետ սքի) 4–6 հատ
- Բեռնատարություն ~350 կգ/մ²
- Նյութ Բարձր խտության պոլիէթիլեն (HDPE)
- Ջերմաստիճանի դիմադրություն -60°C մինչև +80°C
- Օգտագործման ժամկետ 10–15 տարի
- Գույներ Կապույտ
- Հավաստագրեր ISO 9001, CE, SGS

Ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացուցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի

30 հատ



HDPE լողացող պոնտոնների աքսեսուարներ՝ պտուտակներ և ամրակներ

-անվանում Ամրացման պտուտակ
- Նյութ HDPE
- Չափսեր 400 × 290 × 200 մմ
- Քաշը 1.00 ± 0.20 կգ / հատ
- Հաստություն 5 մմ

-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

10 հատ

HDPE բարձրորակ պոնտոնների արտադրանք՝ անվտանգության ճաղաշար իր միացման մասերով ներառյալ ձողերը և պոնտոնը. ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը (ճոպան կամ խողովակ համապատասխան ներկայացված մոնտաժման տարբերի՝ տես նկար 1-ում)

- Նյութ Բարձր խտության պոլիէթիլեն (HDPE)
- Ջերմաստիճանի դիմադրություն -60°C մինչև -80°C
- Օգտագործման ժամկետ 10-15 տարի
- Գույնը Սպիտակ

-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը

- Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

30 հատ

Արևային լիցքավորվող ծովային նավարկման ազդանշանային լույս

Արևային էներգիա – Ունի պոլիքրիստալ արևային վահանակ, որը լիցքավորվում է ցերեկը և ավտոմատ միանում է գիշերը՝ խնայելով էներգիա և հեշտացնելով շահագործումը:

LED լամպ – Օգտագործում է բարձրորակ լեդ լամպեր՝ մինչև 1.2 կիլոմետր (մոտ 0.65 ծովային մղոն) տեսանելիության համար, ինչը մեծացնում է անվտանգությունը:

Դիմացկուն կառուցվածք – Պատյանը պատրաստված է ուլտրամանուշակագույն ճառագայթներին դիմացկուն պոլիկարբոնատից՝ երկար ծառայության համար:

Ջրակայունություն – Ունի IP56 պաշտպանություն՝ փոշուց և ջրից: Հարմար է ծովային տարբեր միջավայրերում օգտագործման համար:

Ավտոմատ աշխատանք – Աշխատում է ավտոմատ կերպով գիշերը՝ ≤2 վայրկյան հաճախականությամբ փայլատակմամբ:

Երկար կյանք – Լեդի սպասարկման տևողությունը մոտ 50,000 ժամ է, ինչը կրճատում է փոխարինման հաճախականությունը:

Չափսեր – Մոտավորապես 215մմ բարձրություն, 95մմ տրամագիծ

Մարտկոց – Լիցքավորվող լիթիումի մարտկոց (3.7V)

Լիցքավորման ժամանակը – Կախված է արևի լույսից

Աշխատանքային ժամանակ – Մինչև 12 ժամ՝ լիարժեք լիցքավորման դեպքում

Ջերմաստիճանի դիմադրություն -60°C մինչև +80°C

Տեղադրման մեթոդ լողացող պոնտոնների աքսեսուարների՝ անվտանգության ճաղաշար վրա ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը:
-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը
-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

30 հատ



● ● Կարմիր և կապույտ երկկողմանի արևային ազդանշանային լուսարձակող լույսեր (LED) գոտիների անվտանգության ապահովման համար
Նկարագրություն – Ունի 8 մոդուլ՝ յուրաքանչյուր կողմում 20 կարմիր և 20 կապույտ LED, 360° տեսանելիությամբ:
Տեխնիկական տվյալներ
Արևային վահանակ՝ 9V/5W մոնոկրիստալ
Մարտկոց՝ 6V/4Ah լիթիում
Տեսանելիություն՝ >800 մետր
Աշխատանքային ժամանակ՝ մինչև 72 ժամ՝ 8 ժամ լիցքավորումից հետո
Ջրակայունություն՝ IP65 ջրակայուն
Ջերմաստիճանի դիմադրություն -60°C մինչև +80°C
-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը
-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

5 հատ



Նշված [illegible] նյութերը նախատեսված են ապահովելու [illegible] [illegible] [illegible] [illegible] պաշտպանությունը [illegible] [illegible] հուսալիությունը
Շղթա` [illegible] 8մմ յուրաքանչյուրի երկարությունը 5մ
Զանգված բետոնե(հիդրոտեխնիկական կամ հիդրոլիկային բետոն) B25 դասի W20 յուրաքանչյուրը՝ տոնկայի 500kg կապակցված վիճակում, [illegible] [illegible] [illegible] ամրացման համար:
Զսպանակավոր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]



Յուրաքանչյուր նյութից առնվազն 16 ական
-ներառյալ մոնտաժման համար նախատեսված գործարանային մասերը
-Կատարված աշխատանքների և մատակարարված ապրանքների նկատմամբ պատվիրատուի կողմից ընդունելու օրվան հաջորդող օրվանից սահմանվում է 365 օրացույցային օր երաշխիքային ժամկետ` բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, ինչպես նաև ներկայացվում է գործարանային երաշխիքի կտրոնները և նյութերի սերտիֆիկատները հաստատված արտադրողի կողմից:

Ծանուցում` մոնտաժումը,ամրացումը ափամերձ հատվածին (ներառյալ նյութերը և մանրակները) և տեղափոխման աշխատանքները իրականացվում է մատակարար կազմակերպության կողմից նշված հացեով համաձայն նկար N1 -ի դասավորվածության

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ,
ՀՀ Ֆինանսների նախարարության	Տերյան փ. 4
գործառնական վարչություն	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011042471	Հ/Հ 1570099448180100
ՀՎՀՀ 02882913	ՀՎՀՀ 08626999
Հեռ. 010-59-61-52	Հեռ: 044 54 04 55
Էլ. հասցեն gnumner@mia.gov.am	Էլ. Փոստ: sev-art@inbox.ru
Ա. Ծ[illegible]անյան	Ա. [illegible]
[illegible]ուղար/	Տնօրեն
(ստորագրություն)	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« » 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-104 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ "Պայմանագիր"/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

« » 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-104 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ -ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20__ թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20__ թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Հավելված N 3
«   »   2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-104 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________ -ի և ____________________ -ի միջև «--»   20 թ. կնքված
գնորդի անվանումը   վաճառողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________ -ի   միջև -- 20 թ -ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

__________________________________   ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20 թ.